



ԲԱԶՄԱՎԵՊ

ՌՅԱՅԻ 1866 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԶՈՐՈՐՈՐԴ ՏԱՐԻ . — ՑՈՒԼԻՄ

Բ Գ Ա Ր Դ Ա Ն Կ Ա Ց Ս Ա Ր

(19 յուլիս, 803)

Կոստանդնոպոլսի քեչ կամ շատ դիւրակեաց բնակաց տեղափոխութեան կամ օդափոխութեան սովորութիւնն՝ նշանաւոր բան մը, մանաւանդ թէ մաս մ'է իրենց կենաց, և այն քաջաքը ճանաչողաց յայտնի է թէ ինչպէս աշնան միջի կամ ետքի հովերը փշելուն պէս՝ ցրուեալ բնակիչքն կը փութան կը ժողովին այն արևելից և արևմտից մեծ սրտաձև կենդրունին մէջ, իսկ գարնան առաջին տպքովէ հովերուն՝ կ'ելլէն, իրբւ թուլացեալ սրտէն դուրս թափելով և բազմաճիւղ երակաց մէջ մլուելով՝ գեղերը տուն տեղ փնտուելու և բնակելու : Վստորոնի երկու շրթանց վրայ եղած շէնքերն ըբաւելով այնքան բազմութեան կամ չյարմարելով ամենուն ախորժակին և պէտքին, շատերն այլ (մանաւանդ այս ետքի աւելներս) փոքրիկ նաւարկութեամբ

մը կ'երթան Պրոպոնտոսի կապուտակ՝ կոնքէն (Մարմարայի) դուրս ցըցուած զանազան տեսքով գեղեցիկ, անուշող անուշչով մանրիկ ու մեծկակ կղզեաց մէջ քանի մ' ամիս անցընելու, զբոսանաց ձայներով փափագընելու այն առանձնութիւնը՝ զոր զրեթէ հազար տարի եկեր փնտուեր էին հոն շատ մեծամեծ և փոքր մարդիկ, արք և կանայք, ամուսինք և կուսանք, կայսերք և կայսրուհիք, բռնաւորք և բռնարարեալք : Անոնց բազմաթիւ վաճորէից և արգելանաց՝ (իրաւ հիմայ շատ քիչքայց) գուցէ դեռ բաւական նշխարք մնացեր են՝ յիշեցընելու հին աշխարհ հին քաղաքականութիւն մը, կամ տարբեր մոտածութիւն և զգացմունք : Յոյն կայսերաց ժամանակ զրեթէ այս կղզեաց ամեն դուրս ու գար տեղուանքն այլ ծածկուած էին եկեղեցիներով և վանքե-

րով, զոր կամ իրենց համար կամ ի-
րենց այօթողաց համար կու շնէին իշ-
խանազոնք. անոր համար ալ մինչև
հիմայ իշխանաց կամ իշխանութեաց
կղղիք կ'ըսուին այս Մարմարայի արևե-
լեան ափանց մօտ եղած տասնի չափ
կղղիքն և կղղեակը, հանդերձ քանի մը
յամաք ժայռերով, որոց այլանդակ ձեւ-
րըն, և նոյն իսկ մեծագոյն կղղեաց ա-
պառաքներն, և ծովուն միջէն յանկար-
ծօրէն իմն ցցուիլն հին ատեն Քաջաց
կամ դիւաց բնակութեան յարմար
կարծեցոցին զիրենք, անոր համար 'ի
նախնեաց Տեմոնիստեան կղղիք անուա-
նէին. բայց քրիստոնէութիւնն հալածե-
լով զգես և զքաջ՝ սրբազնից բնա-
կութիւն ըրաւ այն ծովակոծ անկոխ և
անմատոյց ժայռերն այլ. անկէ ետև հա-
մարձակեցան ոմանք յիշխանազանց՝ շի-
նել հոն նաև իրենց առանձնական զրօ-
սանաց կամ բնակութեան տեղեր. որը
և այնչափ յարդի եղան՝ որչափ մեծ մայ-
րաքաղաքին մօտ էին սահմանով, և հե-
ռու անոր խառն 'ի խուռն աղմուկնե-
րէն և կիրքերէն:

Յայտ է տեղւոյն ծանօթից՝ որ այս
կղղեաց մէջ (որոց չորսն միայն մեծ-
կակ և բազմաբնակ էին) ամենէն մօտն
'ի ցամաք՝ Առաջին ըսուեցաւ 'ի Ցու-
նաց, Բրո՞դա, որ և հիմայ այլ Բրո՞դի
կ'ըսուի. իսկ 'ի Թուրքաց Գլունալը կամ
Գղլլ-ատա, իր գետնին կարմրութեանն
համար, և անկէ բրոլոր իշխանաց կղղի-
ներն ալ նոյն անուամբ կը կոչեն (Գր-
դըլ ատալար). Քաղկեդոնէն (Գատը-
քէց) հաղիւ չորս հինգ մղոն հեռու ըլ-
լալով՝ առաջին երկողովն է այն փոքրիկ
միջերկրեայ ծովուն ծփանաց վրայ՝ կը-
կածե ուռած և քառածայր տարա-
ծուած: Իր հին շէնքէրուն մէջ ամենէն
առաջինն և նշանաւորն էր մեծ վանք և
արգելանք մը շինուած 'ի սկիզբն թ գա-
ռու (801), ուր ընդ կանաւոր կրօնաւո-
րաց՝ ակամայ կամաւ կը բնակէին և աք-
սորեալ իշխանք և պաշտօնեայք կայսե-
րաց, և երբեմն նոյն իսկ կայսերը. բայց
ասկէ ալ քիչ առաջ կը յիշուի ուրիշ
վանք մը՝ զոր շիներ էր (Ը դարուն վեր-

ները) տէրութեան երևելի պաշտօնէից
և զօրավարաց մէկն, և յանձներ էր ա-
զօթասէր և հոգեսէր անձանց. անոր
քով իրեն համար ալ պահելով պղտի
երկիր մը, ուր իր ամենէն հանգիստ և
զսւարճալի օրերը կ'անցընէր՝ գետինը
մշակելով, պարտէզ դարմանելով, երբ
որ իր մեծամեծ պաշտօններն և պատե-
րազմաց դադրիլն պարապ ատեն թո-
ղուին. վասն զի կայսերութեան ասիա-
կան թեմից կամ նահանգաց մէկուն
կողմանակալ վերակացու էր, և եսքերը,
անոնց ամենէն գլխաւորին, բուն Արևե-
լից (Անատոլիքոն) ըսուած նահանգին,
որ կը բովանդակէր հինգ հին աշխարհ,
Լիկայոնիա (Ղոնիա), Փոփուգիա (Թէր-
միան), Խաւարիա, Պամիկիլիա, Պիսի-
դիա (Համիտ, Թէք.քէ). զինուորական
կարդի մէջ ալ յառաջադիմելով ճար-
տարութեամբ, քաջութեամբ և երկար
արդեամբք բոլոր արևելեան աշխարհաց
սպարապետ կամ միազլիսապետ (մոնոս
գրադիոսոս) եղաւ, և կայսերութեան
առաջին քաջ և անուանի գօրավարն:
Ասիկայ էր հայաղդի իշխանն (հաւա-
նօրէն Մամիկոնէից ցեղուէն) Վարդան
պատրիկ՝ թուրք կոչուած:

Այս կոչման պատճառը չեն իմացը-
ներ պատմիչք, և այնչափ աւելի նշա-
նաւոր է որչափ որ գեռ թուրքաց ա-
նունն հազիւ կը լսուէր յարևմուտս այն
ատեն. թերեւ Արաբացւոց (կամ Խաղ-
րաց) հետ պատերազմի մ'ատեն թուրք-
քի հետ կոռուելով և յաղթելով այս
անունն առած ըլլայ: Նոյնպէս կը լւեն
իր երկար ատեն նահանգաց կառավա-
րութեան, և զօրավարութեան մէջ ը-
րած մեծամեծ գործքերը, որովք այն-
քան փառք, համբաւ և իշխանութիւն
ժառանգեր էր, մինչև բոլոր արևելից
սպարապետ ըլլալ, և խաղաղութեամբ
պահել այն խիստ շատ անգամ: խոռ-
ված աշխարհները. թուկ թէ ինքն էր
այն Հայկական թեմին (Արմենեակը,
Արմենիաքոն) կառավարիչ Վարդանն՝
որ կը յիշուի յամին 772 ուրիշ թե-
մակալ իշխանաց հետ Արաբացւոց յար-
ձակման դէմ իսաւրիոյ մէջ (Թաշ-իլի).

անկէ վերջը ինչուան 30 տարի ուրիշ յիշատակ չըլլար վրան, բաց ՚ի մեծ և սրժանաւոր վարուցը գոփութենէ՝ որով իր իշխանակցաց մէջ երսելի եղաւ. մանաւանդ՝ անանկ վարուց ապականութեան դարու մէջ, յորում նախ կայսերք անկրօնութեամբ և անկարգութեամբ հասարակաց դայլթակղութիւն և իշխանաց համարձակութիւն կու տային ՚ի չարիս: Վարդան՝ ոչ անոնց օրինակէն և ոչ իշխանութեան և յաղթութեանց մեծութենէն ուռեցաւ աւրուեցաւ. այլ արդարակորով, առատաձեռն, բարերար և բարեսէր բարքով՝ իր և աստիճանին պատիւը պահեց, և ամենուն սիրելի եղաւ, մանաւանդ զօրաց. որոց քաջութեան և հաւատարմութեան համեմատ առատ վարձք կու տար, առանց աշառութեան և ազահութեան. արդարութեամբն ամենուն պատկառելի, բարեպաշտութեամբն ալ վատահանալի անձ մ'եղած էր. և այնչափ աւելի յարգելի և սիրելի, որչափ զզուելի էին ժամանակակից կայսերքն իրենց պալատականքը և գործակալօք, մանաւանդ ամենէն ետքի կայսրն. որ պատճառ եղաւ վարդանայ բաղդն և փիճակը փոփոխելու, և նոր պատճական տեսարան մը բանալու: Բայց այս բանս լաւ ճանչնալու համար՝ հարկաւոր է նախ ը զարու կայսերաց վրայ համառօտ տեսութիւն մը, սկսեալ մեր վարդանայ համանուն կայսեր յաջորդէն:

Շատ ատեն չէ որ պատմեցի քեզի, չայկակ, այդ երազատես վարդան կայսեր վերջին աշխարհախրատ երազը և արթնութիւնն ՚ի խաւարի, որուն ծածկուելէն վերջն անմիջապէս երկրորդ օրը (Հոգեգալստեան)՝ իր մոտերիմն և տէրութեան դիւնապետն Արտեմիոս (որ գուցէ իրեն համազգի չայ էր) կայսր ընտրեցաւ, և անոնմը յԱնաստաս փոխեց. և երկու և կէս տարի տիրելէն ետև՝ ծովային զօրքն թէողոս անուամբ աննշան մէկն ընտրեցին. Անսատաս ըստիպեցաւ առանձնանալ և քահանայայ նալնոյնպէս տարիէ մ'ետև թէողոս ալ վասն զի կոնոն անուամբ Մարաշցի չայ

մը կամ իստարացի մը, որ զինուորաւ թեան ատեն ինքզինքը կուն անուաններ էր, Արմենէակաց թեամակալին Արտաւազոյ օգնութեամբ կայսր եղաւ 25 տարի (716-741). որուն յաջորդեց որդին կոպրոնիմոս 35 տարի (741-775), ասոր ալ իր որդին կոստանդին Խազիր (775-780). ասոր ալ որդին կոստանդին և (Ա. Պորփիրոստէն յամն 780-797). որը թէ և քանի մը ցանցառ լաւութիւն ցուցին, բայց պատկերամարտութեան աղանդով, ամբարշտութեամբ, մնապաշտութեամբ, անզթութեամբ, հալածանքը և պէսպէս մոլորութեամբք՝ կայսերութեան և կրօնից նախատինք, և հպատակացն գարշելի և գանելի եղան. մինչև իրենց նախահօր լւոն իսաւրացւոյն մեռնելէն վերջը՝ կոպրոնիմոսի բանաւորաբար իշխել սկսած ատեն՝ զօրքն ապստամբեցան, և իր քեռայրը՝ վերայիշեալ չայկազն Արտաւազով կայսր ընտրեցին. որ տարի մը կայսերութեան ատեն՝ պատկերաց պաշտոնը նորոգեց և կայսերութեան ալ մեծ յոյս կու տար. բայց կոպրոնիմեայ կուսակիցներէն յաղթուելով՝ դաստապարտեցաւ ՚ի բանտ և ՚ի կուզութիւն, իր երկու կտրիճ որդիքներովը: կոպրոնիմոսի համանուն թոռն և վերջին իսաւրացին (կոստանդին և) ինն տարուան էր հօրը մեռած ատեն. անոր համար մայրն Եռինէ եղաւ խնամակալ, և քիչ ատենէն բռնակալ. իրաւ եկեղեցւոյ հալածանքը դադրեցուց և պատկերները կանգնեց, բայց իր գահն ալ գոնէ իր որդուն գահէն աւելի բարձրացը. նել ջանալով՝ մայրութեան պատիւն և անունն ալ պղծեց, երկու անգամ իշխանութիւնը յափշտակելով և զորդին իրեւ ՚ի բանտի արգելական պահելով, ու խորամանկութեամբ զօրքերէն հաւատարմութեան երդումն պահանջնելով. միայն չայկական գունդն մերժեց կայսրուհոյն անարժան խնդիրը և դէմ կեցաւ: Եսինէ անոնց վրայ խաւրեց իր գիշերապահ գնդին հայկազն զօրավարը Մուշեղ Ալեքս, որ իր համազերաց կողմն անցաւ և գլուխ կեցաւ. զայն տեսնելով

մէկալ գոնդերն ալ միացան Հայոց հետ
Եռինէ սարսափած արձակեց իր կայսր
որդին յարգելանէն , ուր ինքն արգե-
լուցաւ յորդւոյն . որ և իրեն հաւատա-
րիմ եղող Մուշեղը՝ Հայոց գնդին զօ-
րավար գրաւ . բայց մայրն որ ամենայն
կանացին ըրբութեան , խորագիտութեան
և փառասիրութեան օրինակ կրնայ ըլ-
լալ , մինչև ՚ի յետին անդժութիւն , ոո-
րէն տիկնութեան հասաւ՝ որդւոյն սիր-
առն ալ շահելով՝ ուրիշներունն այլ ,
բայց ՚ի Հայոց գնդէն , որով իրարու-
թիւնամի եղան . Հայք իրենց թեմը քա-
շուելով (յԱրմենեակը , որ է մասն
կապագաղովկիոյ և Պոնտոսի) հոն եղող
թեմակալ թէոդորոսը մերժեցին և կա-
մակարութեամբ զԱլեքս Մուշեղ կ'ու-
զէին . կայսրն թէպէտու երախտապարոտ
էր ասոր , և արդէն Հայոց զօրավար
գրեր էր , բայց վախնալով անոնց պա-
հանջմունքէն , և մանաւանդ սուտ համ-
բաւէն (զոր գուցէ Եռինէ հնարել կամ
հոչակել տուեր էր) , թէ զանիկայ կայսր
դնել կ'ուզեն , բռնեց բանտեց զՄու-
շեղ , մազերը կտրել տուաւ (երբն կրօ-
նաւորի) , յետոյ և կուրացուց անդժօ-
րէն : Այս բանիս վրայ իրաւամբ զըր-
գուեալ և զայրացեալ Հայք՝ ապստամ-
բեցան . կայսրն երկու զօրավար խաւ-
րեց վրանին բաւական գնդով . Հայք՝
զօրքերը ջարդեցին , զօրավարները բըռ-
նեցին կուրացուցին ՚ի վրէժ աչաց Մու-
շեղայ . պէտք եղաւ որ կոստանդին բո-
լոր կայսերութեան զօրքերը ժողովէ և
խաւրէ Հայոց վրայ . որոց արիւնոտ աշ-
քըն՝ որ այնքան մեծազօր բանակը բա-
նի տեղ չէին դներ , դժբաղդաբար ոս-
կոյ փայլունքէն շացան , ոչ ամենքն ,
այլ մէկ մասն , որք և մատնութեամբ ետ
կեցան իրենց ընկերներէն . ասոնք քիչ-
որ մնալով՝ պաշարուեցան կայսերա-
կան զօրաց բազմութենէն , և յետ եր-
կար դիմակալութեան և երկու կողմէն
կոտորածի , բռնուեցան ուժաթափ Հայք ,
դիմատրնին դիմատուեցան , ոմանք աք-
սորեցան , մէջերնէն ամենէն յամառ և
անհաջող հազար հոգի կապուած
բերուեցան ՚ի կ.Պօլիս , ուր մեծ կրկի-

սին մէջ նախատուելով՝ ճակատնին խա-
րան զարկին՝ կրակէ գրով զրելով Հայ
ապստամբ՝ , և աքսորեցին ՚ի Սիկիլիա
և ուրիշ կղիներ . իսկ իրենց մատնիչ
ընկերներն ալ փոխադարձաբար յու-
նական ագահութեան մատնուելով՝
արժանապէս անվարձք մնացին . ապա
սրտմտած անցան Արաբացւոց կողմը ,
և սկսան վաղել աւրել կայսեր երկիր-
ները : — կոստանդին ալ իր թեմեա-
մուութեան և ապերախտութեան պա-
տիմը գտաւ , թէ և շատ դժնդակ կեր-
պով . Մուշեղայ կուրացման հինդերորդ
տարեդարձին օրը (19 օգոստոսի , 797)
քարասրտեալ մայրն Եռինէ՝ որդւոյն
քնացած ատենը դահիճներ խաւրելով՝
աչուըները խարկել խաւարել տուաւ .
որոյ ցաւէն աւելի եղաւ իրեն նեղըր-
տութիւնն , անկէց ալ աւելի՝ մօրը նա-
խատինքն , որ իր ամեն լաւ գործերն
ալ ծածկեց , և կշխանասիրութիւնը
բռնաւորութեան դարձընելով՝ ալ ա-
ւելի ատելի ըրաւ զինքը . մինչև հինգ
տարի հազիւ կրնալով համբերել՝ ար-
քունեաց պաշտօնակալ եօթն նեղըր-
նիք միաբանեցան ընդդէմ իրենց թա-
գուհոյն , և ճիւաղի մը ձեռքէ ազատիլ
ուզելով՝ զրին կայսր մը , որ և ոչ Եռի-
նեայ լաւ յատկութիւններէն մէկն ու-
նէր :

Ասիկայ էր Պիսիդիացի մը , ըստ ո-
մանց արարացի ծագմամբ , Նիկեփոր
անուամբ . ցած , կծծի , տիսմար մարդ
մը , բայց պատկերամարտ ըրպալուն հա-
մար՝ ոմանց գովելի երկցաւ . սակայն
քիչ ատենէն պալատականք և զօրա-
կանք իմացան իր արծէքը , երբ սկսաւ
անոնց թոշակնին պակսեցընել , ստա-
ցուածքնին կերպ կերպ հնարքով յա-
փրատակել , և մնացածն ալ կողոպտե-
լունոր հնարքներ մտածել . մոլութեան-
ցը վրայ գոնէ առաջին կայսերաց ազ-
նուական տոհմին շուք ու շնորհքն ալ
չունէր . անոր համար շուտով զզուելի
եղաւ . մինչև նոյն իսկ զինքն ընտրողքն
այլ զղացան , և անոնցմէ մէկն կը պատ-

րաստուէր դաւաճանելու , բայց իմաց յուելով՝ թունով սպանուեցաւ : Տարի մը չանցած կայսերութեանը վրայ՝ Քաղաքանի գրան քով ձիավարելու ատեն՝ ընկաւ և ոտքը կոտրեցաւ . ժողովուրդն կը փափածէր որ մէջքը կոտրած ըլլայ , և գրեթէ փափածն իրաւ կարծուելով՝ ինչուան զըրսի դաւառները համբաւ թռաւ թէ Նիկեփորի մեռեր է . սկսան ուրախութեամբ նոր և արժանաւոր կայսրը մը փնտոել . և թէպէտ քիչ ատենէն Նիկեփորի ողջութեան և առողջութեան լուրն իրենց կարծիքը ցրուեց , բայց չկրցաւ փափածնին փարատել . մասնաւանդ զօրաց՝ որ իրենց թոշակէն զըր կուելով՝ աւելի գրգռուած էին : Ասոնց մէջ այլ աւելի զայրացողքն էին արևելքի գունդերն . թերևս ոչ այնչափ իրենց եղած զրկմանն համար՝ որքան կայսերութեան պատույն անարգանացը . մասնաւանդ որ իրենց մօտ , ներկայ և վերակեցու ունէին անանկ իշխան և փարիչ մը՝ որուն արթնութիւնն , արիութիւնն և առատասրտութիւնն՝ մէկ կողմէն յանդիմանութիւն էր Նիկեփորի բարուց , մէկայլ կողմէն հրապոյր մը՝ փոխանակ անոր՝ կայսր ունենալու զսակն զվարդան :

Կամաց կամաց հրապոյրն ՚ի խորհուրդ դարձաւ , խորհուրդն ՚ի յորդոր , ՚ի փորձ և ՚ի գործ , որուն միայն ինքն վարդան կամակից և գործակից չէր . որքան որ իր արդիւնքն և զօրաց սէրն իրմէ աւելի արժանաւոր մը չէր գտներ ՚ի կայսրութիւն . յոր արդէն իսկ թերևս հրաւիրած կ'ըլլային զնիկեփոր ընտրողքն՝ եթէ իրենց մօտ ըլլար վարդան , կամ շատ չվախնային անոր արդարութենէն . և որչափ ալ այս առաքինի զօրավար կ'ամրշնար իսաւրացի տոհմին տեղայսպիսի անարդ Պիսիդիացի մը արևելքի կայսր և իրեն հրամանատար ունենալու , իր վեհանձնութեամբ և ազնութեամբն ոչ միայն հեռու էր այնպիսի փառասէր մտածութենէ : այլ և ՚ի հակառակելէ անոր հետ , զոր ազգն՝ թէ և անդիտութեամբ՝ ընդուներ էր , և սըրբակրօն պատրիարք մ'այլ (Տարասիոս)

թէ և վախով՝ օծեր էր ՚ի կայսր : Զարհութեցաւ արիասիրտ զօրապետն՝ երբ իր ինչուան այն ատեն՝ հնազանդ զօրաց հրաւէրք և յորդորն լսեց ՚ի կայսրութիւն , և դէմ կեցաւ . թէպէտ չկրցաւ . ուտարաց յաղթողն իր զօրաց ալ յաղթել : Միայն հոս զարմանալի և իրեն արժանաւոր գտուեցաւ Հայկական գունդն դըն . երբ ուրիշ ամեն թեմից գունդին միաբան և միահաւան կը կանչէին և կը ստիպէին զնա ՚ի կայսրութիւն , Հայք՝ որ գեռ տասն տարի առաջ իրենց հաւատարմութեանն համար առ կոստանդին , անոր մօրը դառն ու պժգալի վրէժիւնդրութեան զրհ եղած էին՝ ճակատ նուն վրայ այնպիսի նախատանաց դրոշմ՝ մ'առնըրով , հոս փոխանակ աւելի արդար վրէժինդրութեան՝ իրենց առաքինի համազգւոյն և ուրիշներէն ընտրած կայսեր՝ չողեցին կողմանակից ըլլալ , այլ անկէ առաջ օրինաւորապէս ճանչցուած կայսեր հաւատարիմ մնալ : Այսպիսի թել թել մանուած պատահարներու մէջ մերայոց այս գործը՝ յիրաւի շատ զարմանաց և շատ մեծարտութեան գործ մ'է . միանդամայն և մեծ խրատ և օրինակ մ'էր վարդանայ՝ զգոյշ և հաստատ կենալու իր մտաց վրայ :

Արդարև շատ հեռի էր այս թուրք վարդանս այն փիլիպիկ վարդանէն , որուն կերպարանաց նոխութիւնն և լեզուին ճուռականութիւնն զինքը հանեցին ՚ի գահ կայսրութեան , իսկ զսա զօրքերէն աւելի անձնական արժէքն կը հրաւիրէին հոն , բայց առաքինութիւնն չէր համարձակեր : Ասոր վրայ կ'երևի մեր հին և մեծ , կտրիճ ու կարմիր սուլրք վարդանայ չնորհաց նշոյլը , և անոր բարակ իսիգը , գուցէ և խոճահարութիւնն , այլօրինակ կերպով մ'այլ նաև իր սըրտառուչ և եղերական բաղդն : Կրակապաշտ Պարախիկ մոդերուն և լուսաւորչի հաւատքը պահող ու պահպանող հայրապետաց ձայներուն մէջ գտուողին նման՝ ասիկայ այլ ընկաւ ընդ մէջ լրութեան Հայոց գնդին և յորդորանաց ու սպառնալեաց Յունաց գունդերուն , որք ինչուան սրակոտոր , անինայ առ

Ժաման մահ կը կանչէին, թէ որ չընդունէր զթագն կայսերական։ Վարդան յոզնեցաւ, թեթեցաւ, տկարացաւ։ Գուցէ և վայրկեան մը իրմտածութեանց որոշման վերջի առաւօտն չծագած՝ ֆիլոմելիոնի սոխակաց ամառնային անուշակ գիշերախօսութեանց հետ՝ ինքնակարութեան և աշխարհի հրամանատարութեան հրապուրական ծածուկ ձայն մ'այլ ազգեց սրտին։

Յուլիս ամսոյն առջի կէսն էր այն ատեն, և ինքն այդ յիշեալ (ֆիլոմելիոն) քաղքին մէջն էր, որ իր ընդարձակ թեմին չորս մեծ նահանգաց զրեթէ միջասահման է, Պիսիդիոյ, Իսաւրիոյ, Լիկայոնիոյ և Փոփուգիոյ, և այս ետքինիս սեփհական ։ իսկ հիմայ Համիտ գաւառի կամ՝ Գարաման նահանգին Աքշանի քաղաքն սեպուած է։ որոյ քաղցրածայն սոխակքն անուանի են, և կարծուի թէ անկէց զրուած է քաղքին հին յունական անունը՝ որ կը նշանակէ այս թռչնոց երաժշտապետը։

Վարդան դեռ տարակուսանաց սլատերազմի մէջ էր. թէ և ակամայ կամ կիսակամ յանձն առաւ զօրաց բռնադատութիւնը, և անոնց ընծայած կայսերական պասկը, սակայն կը խրտէր՝ երբ կը մտածէր որ անով Կ.Պօլսի գահին վրայ փայլելու համար՝ պէտք էր հանել պատենէն իր քաջայաղթ՝ այլ և խնայող սուրն այլ. մինչև այն ատեն հայրեննեաց, տերանց և իրաւանց գէմեկող թշնամեաց վրայ ցուցեր էր անոր փայլը և իջուցեր հարուածները, ինչպէս հիմայ որ արդէն հասակն և կը տացած փառքն՝ հանգիստ կը վայլեցը. նէր, ինչպէս այն ահագին և վրէժիւնն գիր սուրը՝ իրեն փառքաց և պատիւ փնտը. գուցէ և պէտք էր քիչ տարի առաջ առաջ բարձր կամ մարդարէութիւն՝ յաջող չէր. Հայկազն անուամբ հոչակուելու կայսրն ոչ ինքն էր, ոչ իրմէ 90 տարի առաջ կայսերացեալ Փիլիկն Վարդան, և ոչ այն Վարդն՝ որ Եսինեայ որդույն թագաւորած տարին (780) ուզեց թագը կորպել, և չյաջողելով բըռնուեցաւ, ծեծուեցաւ, հալածուեցաւ. այլ անոր որդին վերոյիշեալ Լևոնն՝ զինակիրն Վարդանայ։ — Թերևս այս անակնակալ նախասացութիւնք աւելի խոռվեցին շփոթեցին արդէն տափնապեալ սիրտը. և այն որ երբ միայնակ ըլլալով փառաց կեղակարծ հանդիսարանին մէջ՝ կը յուսար և կը յուսայընէր ինքն իրեն յաղթելու, հիմայ իրմէ նուաստից և իրեն սպասաւորաց չկարծուած կայսերութեան համնիլը և իր կարծուածին անյաջողութիւնը լսելով, կարծես թէ սրդողեցաւ, և իրեն մեծ նախատինք սեպեց. ուզեց հոս իր կամքը խորտա-

ըլլալ։ Հոս բանակներէ անվախ սիրտն՝ ինքն իր սուրէն սկսաւ գողալ. և առժամ մը իր բոլոր գունդերուն՝ Վարդան կայսեր կեանք կանչելն՝ բաւական չեղաւ խղճին ձայնը մարելու. ուզեց գոնէ աւելի վստահանալի և վկայեալ խղճի մ'ալ խորհուրդ հարցընել։ Այս կողմերը սրբութեամբ և հմաստութեամբ համբաւեալ ճգնաւոր մը կար, որ և հոգեստեսութեան շնորհք ունէր, ըստ պատմչաց, գոնէ ըստ հաւատոց այն ատեննուան Յունաց՝ որ այս հազուատուր շնորհքը՝ շատերու կ'ընծայեն. և կ'ըսեն թէ երբ վարդան եկաւ իրեն խորհուրդ հարցընելու՝ ճրդնաւորն յայտ և համարձակ պատմեց իրեն զիստուն գալիքը, և ոչ միայն իրեն այլ և իրեն հաւատարիմ ընկերաց. ըստ թէ իրեն զինակիրն Լևոնն (Արծրունին) պիտի ըլլայ կայսր. Նոյնպէս միւս զինակիր կամ թիկնապահն այլ Փոփուգի թոթով Միքայէլն. իսկ իր մէկայլ զօրավարն թովմաս՝ նոյնպէս պիտի փորձէ բայց պիտի չյաջողի կայսրութեան։ Այս ամենն այլ ատենին կատարուեցաւ ստուգապէս, ինքն եթէ ըսած էր և եթէ շրած. բայց բանն այս է՝ որ Վարդանայ վրայ ըրած մարդարէութիւնն՝ յաջող չէր. Հայկազն անուամբ հոչակուելու կայսրն ոչ ինքն էր, ոչ իրմէ 90 տարի առաջ կայսերացեալ Փիլիկն Վարդան, և ոչ այն Վարդն՝ որ Եսինեայ որդույն թագաւորած տարին (780) ուզեց թագը կորպել, և չյաջողելով բըռնուեցաւ, ծեծուեցաւ, հալածուեցաւ. այլ անոր որդին վերոյիշեալ Լևոնն՝ զինակիրն Վարդանայ։ — Թերևս այս անակնակալ նախասացութիւնք աւելի խոռվեցին շփոթեցին արդէն տափնապեալ սիրտը. և այն որ երբ միայնակ ըլլալով փառաց կեղակարծ հանդիսարանին մէջ՝ կը յուսար և կը յուսայընէր ինքն իրեն յաղթելու, հիմայ իրմէ նուաստից և իրեն սպասաւորաց չկարծուած կայսերութեան համնիլը և իր կարծուածին անյաջողութիւնը լսելով, կարծես թէ սրդողեցաւ, և իրեն մեծ նախատինք սեպեց. ուզեց հոս իր կամքը խորտա-

կել կարողութեան ուժովը : Հոս իր խըդ-
ճին ալ քաղաքականութեան ալ ուրա-
ցութիւնն ըրաւ . և որ առաջ զմարդիկ
և զրանափս տկար կը սեպէր զինքը հա-
մողելու և չէր ուզեր կայսր ըլլաւ . հի-
մայ կարծես թէ ուզեց Աստոծոյ ալ
յաղթել կայսր ըլլաւ կարենալով : —
Բայց և ոչ իր խիդը կրցաւ նուածել
երկար ատեն . և այսինքն իր մէջ ըրած
կում և կամ վերջին յաղթութիւնն
իրեն վայելու և փառաւոր յաղթա-
նակ եղաւ :

Յուզիսի 19 էր, յամին 803, երբ ա-
նուանեցաւ ինքն կայսր, որ և թ վար-
դան պիտի ըսուէր, եթէ այն վայրկե-
նական ուրացութեանը վրայ ուզէր յա-
մառիլ : Ի մեծ խնդութիւն զօրացը բա-
նակը շարժեց երադ երադ դիմեց շիտակ
դէպ ՚ի մայրաքաղաքն կայսերական .
հասաւ նստաւ անոր դիմաց Խրիւսոպօ-
լեայ (Խրիւստար) պարսպաց տակ . ութ-
օր հոն կեցաւ առանց զարնելու առնե-
լու մոնելու այդ Վոսպորի ասիական
ափանց առաջին քաղաքը . կը սպասէր
կը դիտէր որ գուները բանան և զինքը
հրատիրեն . կ'ուզէր փորձել թէ զօրացը
պէս բոլոր քաղաքացիք ալ կ'ընդու-
նէին իր կայսրութիւնը, զոր՝ միտքը
դրած էր առանց արեան և ֆնասու ստա-
նալ, թէ որ այնպէս յաղողէր բաղդն,
որ անյուսալի էր : Կը զարմանային կը
զայրանային զօրքն՝ վարդանայ դանդա-
ղութեանը վրայ . ևս առաւել իր հաւա-
տարիվքն, սպայքն և անձնապահքն,
մանաւանդ գիխաւորքն լևոն և Միքա-
յէլն . որք լւաւ իմացան թէ վարդան ա-
ռանց զարնելու որս ընել կ'ուզէ, և իր
սովորական բարեսրտութեամբը ձեռք
ձգել այնպիսի բան մը՝ որ անկարելի
էր առանց բռնութեան և արեան . և
թէ այդպէս ուշանալն իրենց բաղդին և
կենաց մեծ վտանգ է: Ոչ զվարդան կըր-
ցան համոզել և ոչ իրենք համոզուե-
ցան այնպիսի որոգայթի մէջ մնալ . և
գուցէ անոր տեղ՝ իրենց ապագայ կայ-
սերութիւնը ապահովելու համար՝ թո-
ղուցին զանիկայ, և Վոսփորոն զիրենք
քաժնելով՝ ձգեց ՚ի կողմն Նիկեփորի, որ

երբեւ աւետաւոր հրեշտակներ ընդունե-
ցաւ զանոնք, և վախով կորացեալ գը-
լուիր կանգնեց . երկուքին ալ մեծա-
մեծ պաշտօն և իշխանութիւն տալէն
զատ՝ մէկմէկ ալ թագաւորավայել պա-
լատ և երկիրներ տուու . և սկսաւ զօրք
ժողվել վարդանայ դէմ ենելու : — Իսկ
ասիկայ՝ որ եթէ ուզէր գործել ինչուան
այն ատեն գուցէ գործն ալ վճարած
կ'ըլլար, երբ տեսաւ որ փոխանակ
մայրաքաղաքէն իրեն պատգամաւոր և
հրաւիրակ գալու՝ զէնքի ճայներ կը լը-
սուին, վերուց բանակը ՚ի Խրիւսոպօլ-
սոյ և տարաւ Պրուսայի մօտ Ոլիմպոս
լըրան ուզքը գադրեցուց¹ :

Զօրքն գուցէ կարծէին թէ վարդան
նոր պատերազմական խրեւութեան
հնալք մը կը մտածէ, բայց անհանգիստ
կը սպասէին զարնուելու կայսերական
զօրաց հետ, դեռ վստահ ըլլալով յաղ-
թութեան՝ իրենց քաջ առաջնորդին
վրայ : Իսկ նա իր սրտին մէջ սաստիկ
և մեծամեծ պատերազմներ ունէր. ամիս
մ' ատեն բաւականէն աւելի եղաւ իր
տաքութիւնն ինցորնելու . և նորէն առջի
խիդը բանեցընելու: Պատերազմ, յաղ-
թութիւն, կայսրութիւն, շատ պզտիկ
և նշին կ'երևէին՝ կենաց վերջին ատե-
նին և հանդերձեալ դատաստանաց և
Աստուծոյ քննութեանց և հատուցմանց
առջև . որոց յիշատակաւ զարհուրած՝
կը մտածէր գոնէ իր խիդն ու հոգին
անմշաս ազատել այն վտանգաւոր վի-
ճակէն՝ ուր ակամայ կամօք քշուեր ե-
կեր էր . ամենէն դժարն էր զինքը քը-
շող և սիրողները հաւանեցընել, այս-
ինքն զօրքերը, որոնք եթէ իմանային
միտքը՝ ոչ միայն գուցէ կատղած զա-
նիկայ կտոր կտոր կ'ընէին, այլ և իրենք
Նիկեփորի կատաղութեան զոհ կ'ըլլայ-
ին . և ահա այս եղքինս էր վարդա-
նայ տագնապն . երկու զիէն սուր և ա-
րիւն կը տեսնէր, երկու կողմէ կու ստի-
պուէր մեծ գործ մեծ որոշմումք մ'ը-
նելու :

Ահա հոս մեր վարդանայ դիմաց այլ

¹ Մալագինա ըսուած քաղաքի մը քով:

Ճկուած էր այն կեսարու բաղդավիճիռ
Ուրբիկոն գետոյ կամուրջն . «Դեռ կըր.
» նանք յետ դառնալ, բայց մէկ մ'օր
» դա կամրջիկն անցնիք, այլ անկէ
» ետև ինչուան վերջը զէնքով պէտք է
» առաջ երթալ » . . . կեցաւ, վերջի մը-
տածովմիւն ըրաւ, նետեց իր նարտին
քուէն, և կամուրջը . . . չանցաւ: Եթէ
կտրդութեամբ չէր պակաս քան զկե-
սար՝ խոհեմութեամբն շատ աւելի ե-
ղաւ. չփաթթեց իր մոտաց աչքը և չե-
ղաւ անոր պէս գահավէժ 'ի վիհս պա-
տահարաց և վուանդաց, այլ իր ա-
ռաջին մեծոգիութեամբ և իմաստու-
թին ու քրիստոնէական արիութեամբ՝
որ զյանդգնութիւնն այլ կը նուածէ,
և կընար կեսարու մ'այլ մեծարել տալ
զՊոմզէու, քանի մ'օր զինուորները
յուսացընելով բարի վախճանի մը, ծա-
ծուկ մարդ խաւրեց առ նիկեփոր, և
խոստացաւ ազատել զնա ամեն վախէ
և վուանդէ, միայն թէ ինքն ալ իրեն և
իր բանակին ներումն տայ և անյիշա-
չար ըլլայ:

Այս պատգամաւորութիւնս՝ նիկե-
փորի համար իր ամենէն վախճանը ան-
ձին ձեռքէն երկրորդ անգամ թագ ընդ-
ունիլ և կենաց ու կայսրութեան մէջ
հաստատուիլ էր. անբացատրելի եղաւ
զարմանքն և ուրախութիւնն ապշածն՝
չէր կընար հասկընալ թէ այնպիսի հա-
կառակորդ մը կընայ այդքան առաքի-
նութիւն ունենալ. չէր գիտեր ինչ կեր-
պով իր հաւանութիւնը, խոստմունքն
և երդունքը յայտնէ. և երանի թէ այն-
շափ սաստիկ յայտնութեան ձեռք չզար-
նէր, որ յետոյ երգմանազնութեամբն
վրան աւելի նախատինք և մեղք չբ-
ըւէր: Մեկէն հրովարտակ գրել տուաւ
խոստմանց և ներմանց, և բաւական չմե-
պելով իր ձեռնազիրն և կնկքը, Տարա-
սիոս պատրիարքին և ամենայն պատրը-
կաց ալ ստորագրել տուաւ. դեռ այն-
շափն ալ բաւական չեպեց վատասիր-
տըն, այլ և իր վզէն կախած կենաց
փայտին նշխարն այլ հանեց և խաւրեց
վարդանայ՝ իբրև անտարակուսելի և
անդրժելի դրաւական, վկայ և ընծայ.

որուն՝ թերևս միայն սատանայ կարե-
նար չհաւատապալ. բայց պատմութիւնն
ցըցուց որ հոս նիկեփոր այլ սատանայի
հետ միահաւան է եղեր: Վարդան իրմէ
աւելի իր զօրաց կեանկըն ապահովընե-
լուն վրայ գոհաննալով, անոնցմէ զա-
տուելուն հնարքը մտածեց. և մինչդեռ
անոնք վալուընէ վաղը կը յուային
թշնամեաց վրայ վազելու, և վերջապէս
իրենց տէրը տանելու հանելու 'ի գահ
կայսերաց, նա իրենցմէ աւելի արթուն
և անքուն կու սպասէր կու գիտէր ժամն
ու վայրկեանը. իր 50 օրուան անուա-
նեալ կայսերութիւնն իրեն 50 տարւոյ
ծանրութիւն տուած էր: — Սեպտեմ-
բերի 8ին Ս. Աստուածածնայ ծննդեան
տօնին գիշերն իր. բանակին շնկոցը
լուեր էր, քունը հանգչեցուցեր էր զզօրս
և զզէնս. գիշերապահն իրենց վրանին
գիմաց հանդարտ և անկասկած կեցեր
էին, ասդին անդին վառած և պլպըրած
ճրագք և կրակն չէին կընար բաւակա-
նապէս վարատել մթութիւնը, որուն
մէջ հազիւ կընար նշմարուիլ վիթխա-
րի և գիւցահասակ լեառն Ոլիմպոս՝ բա-
նակէն մեծ վրանի մը պէս գիշերուան
միջէն դէպ յերկինք քաշուած: — Վար-
դան՝ մէկ մը աչքն ասոր տալով, մէկ մը
դէպ 'ի Մարմարայի ծովեղերքը տես-
նուած լցուերուն, և յետոյ դարձնելով
իր բանակին վրայ՝ որ յուայ և քնոյ
մէջ թաթխուած դադրեր էր, պահ մը
կեցաւ իր վրանին դռնէն դուրս, ուս-
կեց հեռացուցեր էր պահապանները
և միայն իրեն հաւատարիմ մնացող
թովմաս թիկնապահին իմաց տուեր էր:
Մտածեց իր՝ և իրմով մարդկային սրտի
և կենաց բաղըն ու պատահարքը. մուա-
ծեց քանի մը ժամուան մէջ բազմու-
թեան մարդկան և բոլոր կայսերու-
թեան մը կարելի փոփոխութիւնը. մը-
տածեց իր ապագայ կեանկըն և թողլու-
յիշատակը. մէկ մ'այլ իր այնքան տա-
րի վտանգաց և փառաց տարած զօրաց
գունդերուն վրայ նայեցաւ, որոցմէ ա-
սանկ անակնկալ և անպատրաստ կեր-
պով մը պիտի զատուէր, և այլ պիտի
չլսէր սրտաթունդ պատերազմի թըմ:

բուկն և ոսնատրոփի երիվարաց փողին շիմն. այլ ոչ յաղթութեանց նուազք և սաղաւարտից դալար պսակք. այլ ոչ աւարներու և գերեաց բաժին ... «Մնաք բարով, մնաք բարով. Աստուած ձեզի օդնական և պահապան», ըստ, հառաջեց, հեռացաւ: ... իրբու գիշերախառն մենամարտութենէ ելած՝ նախ յուշիկ մնջիկ սկսաւ ոտնփոխել դէպ 'ի հիւսիս, դէպ յեղերս Մարմարայի, միայն զթովմաս թողլով ետևէն զինակիր դալու. յետոյ հազիւ բանակին պատուիչն անցած օտար ճամբով՝ սկսաւ հսկայաքայլ յառաջել, փութալ հեռանալ անոնցմէ՝ որ միայն իրմէ հեռանալ չէին ուղեր. և քսանի մը շափ մղոնները կարճ կարճ կտրելով՝ հասաւ Մուտանիոյ ծոցյն ծայրը կէմէյիկ քաղաքաւանը, որ այն ատեն կիսու կոչուէր, ուսկից և ծովածոցիկն այլ կիանեան խորշ (կամ Աստակեան ծոյ). կիսու քով կատապորիկն անուամբ գիշեաւան մը կար, և անոր մէջ Հերակլի անուամբ վանք մը. Վարդան իր բանակը թողլով՝ շիտակ այս վանքու իջաւ. վանահայրը կանչեց. երբ սա անոր դիւցազնեայ կերպարանքէն և սպառազինութենէն սարսափած կու կասկածէր, ալ աւելի ափշեցաւ և տարակուսեցաւ երբ զօրավարն խնդրեց որ ընդունի զինքըն իրբու կրօնաւոր, և շուտ մը ձեւը փոխէ. չկրցաւ վանահայրն ոչ մէկ կերպով հաւատալ և հաւանիլ Ուշանալ չէր ըլլար. Վարդան՝ որ գեռ զէնքերը չէր թողած, զինուորական և կրօնական քաջարտութիւնը մէկ տեղ բանեցընելով՝ քաշեց ուղիխներու գլխուն վախ տուող սուրբը, և թերևս անոնց վրայ իջեցընելչն աւելի մեծ կտրճութեամբ՝ իր դըլխուն վրայ հանեց, ինքն իրեն կտրեց իր գիշակիները, և իրբ երախայրիք նոր և սրբազն կենաց՝ ընծայեց Աստուծոյ. ապա զէնքերը զրահներն ալ թափելով և իշխանական զգեստը թողլով՝ հագաւ թանձր պարեցօտ մը. և ամենայն քաղաքական և զինուորական զարդերէն և նշաններէն թեթևեալով՝ թուաւէմէյիկի նաւահանգիստը, ուր արդէն

հասած էր զինքն ընդունելու նաև 'ի նիկեփորէ զրկուած. Վարդան ցատքեց մէջը, հրաման տուաւ որ շուտ շուտ թիավարեն, պատեն Պոսիդիոնի հրուան. զանը (Պովպուսուն), և թողլով նիկուիդիոյ ծովածոցը՝ ուղղեն դէպ իշխանաց կղզիները. մինչեւ 'ի հեռագոյնն, մինչեւ 'ի Բրոդա (Գրնալը), իրեն հին և ծանօթ առանձնութեան զրօսարանն Բրոդա, իր շինած վանատեղը և տնկած պարտէզը. ուր և ելաւ շատ աւելի ուրախ քան եթէ Ռակեղիւրը (Սէրայպուռնու) կրխած ըլլար. «Այս է հանգիստ իմ». ըսելով: Իր դաստակերտին բնակիչ վանականք և տեղապահք չէին կրնար հաւատալ տեսածնուն և լսածնուն՝ թէ իրենց իննամակալն, այն մեծ թեմակալն և սպարապետն Արեկից՝ այդ իրենցմէ խեղճ և գծուծ քուրջերով ծածկուած կրօնաւորն է. բայց նաւաւ իմացուց որ եթէ ձեւն և արուեստը փոխեր էր, և հիմայ անունն ալ կու փոխէ, փոխանակ Վարդանայ՝ Մաքա անուանելով զինքը, հոգին նոյն է. առաջ կարծը զինուց և զրահից տակ կակուզ քրիստոնեայ սիրտ մ'ունէր, հիմայ մաշկի և մազեղինի տակ կտրիծ նահատակի և ճգնաւորի սիրտ մը. առաջ զօրավարաց օրինակ էր քաջութեամբ և խելքով, հիմայ նոյն իսկ հին վանականաց և միանածնոց, խստակրօն, զուարթ և աշխատասէր վալքով. և յիրաւի, օրուան կէսը յաղօթն և 'ի հոգեւոր մտածութիւնս կ'անցընէր, կէսն այլ գետին բանելու և իր պարտէզը դարմանելու: Փորձով ալ իմացաւ շուտով որ այսպիսի կեանք իրեն համար կայսերութենէն քաղցր և ցանկալի է, և եթէ աղաշանքով այլ նորէն իրեն տային տաման թագ: չէր ուզեր իր Բրոդայի առանձնական և մենական կենաց հետ փոխել. սուրէն և մականէն շատ աւելի թեթև և դիւրաշարժ էին իր բահն ու բրիչը. միով բանիւ խիստ շատ աւելի երջանիկ էր քան իր հակառակորդն Նիկեփոր: Ասոր ագահութիւնն նորէն արթլնցաւ՝ երբ ապահովութիւնը ստացաւ. Աստուծոյ և մարդկանց վախուն դիմաց՝ կեղծա-

ւորութիւնը և սուստը միջնորդ ձգելով՝
իր ամեն խոստմունքն և աշաւոր երդ-
մունքն ոտքի տակ առաւ։ Նախ վար-
դանայ կուսակից եղող կամ կարծուող-
ները բռնել բանտել տուաւ և ամեն
ստացուածքնին կողոպտեց .յետոյ վար-
դանայ հարստութիւններն ալ յափրշ-
տակեց .միայն անոր զինուորները չնե-
ղեց, վասն զի վրանին կողոպտելու բան
մը չկար : Բայց ամենէն անիրաւ և պրժ-
դակի կողոպտւտն, միանգամայն և ա-
մենէն ցանկալին և թանկագինն՝ եղաւ
իր շատ բարի և գթասիրտ հակառա-
կորդին լուսաւոր և զուարժահայեաց
աչքերն։ Վարդան իր կամաւոր արգե-
լանքէն քիչ օր վերջը՝ գիշեր մը, երբ
գուցէ գեռ իր երկար աղօթքներն ալ
չէր լընցուցած, յանկարծ ոտնաձայն
և շփոթ մը լսեց՝ իր ծովապատ մենա-
նոցին մէջ . քանի մը այլանդակ լեռնցի
լիկայոնացիկ, զոր և ոչ մարդ՝ այլ
մարդագայլը (լիգաններու բռն կոչէ
պատմին), ողք նիկեփորի հաւատարիմ
և արժանաւոր դահիճն էին, յանկարծ
պղծելով և խուվելով տեղոյն և ժա-
մոն և անձին խաղաղութիւնը, բռնե-
ցին իրենց տիրոջնախանձորդկարծուա-
ծը, և գազանօրէն խլեցին խաւարեցու-
ցին այն աչքերը՝ որ միայն յերկինք
վերցընելու, պարտիզկանը վրայ իջե-
ցընելու և երբեմն ծովուն վրայ պտրտ-
ցընելու պահեր էր՝ ամբողջ կայսերու-
թենէ մը հրաժարողն . և մէկէն թողու-
ցին փախան կղզիէն՝ ինչուան քաղքէն
և մարդկանցմէ ալ փախչել ուզելով
կամ ձեւացընելով՝ ապաւինեցան ՚ի
մայր եկեղեցին Ս. Սոփիա : Հազիւ այս
լալի լուրն հոչակուեցաւ, վանք, եկեղե-
ցիք, պալատք, բոլոր քաղաքն շարժե-
ցան գթով և բարկութեամբ . անէծք
և նզովք թափել սկսան կայսեր և գոր-
ծակցացը վրայ . երանելի պատրիարքն
Տարասիոս, պատուական պատրիկին՝
սրտակուոր վաղեցին արքունիքը, յե-
շեցուցին կայսեր իրեն երդմունքը և
ստորագրութիւնը . նիկեփոր երգում
պատառ եղաւ ծերակուտին դիմաց
թէ ինքն ամենևին այդպիսի բան չէր

մտածած և կարծած . և թէ ուրիշի թշնա-
մութեան գործ է, պատուիրեց իրենց՝
որ երթան բռնեն այն չարագործներն՝
որ 'ի Ս. Սոփիա ընկեր էին, թէպէտ և
կանխեր անոնցմէ առաջ ուրիշ մարդ
զրկեն ու վախուցեր էր զաննոնք յեկե-
ղեցին . և անոնց տեղ քանի մ'ուրիշ
մարդ բռնել քննել տուաւ, որ անմեղ
ըլլալով 'ի հարկէ անվնաս ալ արձա-
կուեցան . իսկ ինքն իր չաւատալի կեղ-
ծաւորութիւնը մինչև 'ի ծաղրածու-
թիւն տանելով՝ եօթն օր վակուեցաւ
պալատանը մէջ, մարդու չէր երևեր,
միայն ողբոյ և վայերու ծայները կու լսե-
ցընէր, զորոնք ձեւացընելու շատ աղէկ
կրթութիւն ըրած և վարպետ էր. միայն
թէ չկրցաւ մէկն ալ խարել . այլ աւելի
սաստկացաւ իրեն գէմ եղած հասարա-
կաց ատելութիւնն և անէծքն :

Որչափ պժգալի եղան նիկեփորի
գործն և ծայներն, այնքան զարմանալի
և սրտաւուչ եղաւ վարդանայ լուու-
թիւնն . ամենակին գանգատ մը, տրտունջ
մը, հեծութիւն մը չաննեց, և գրեթէ
միայն ինքն եղաւ որ շանիծեց զնիկե-
փոր . նա և ոչ իսկ մեղաղբեց զնա, հա-
պա ինքզինքն յանցաւոր ճանչնալով՝
մինչև 'ի մահ ապաշխարողի վարը ան-
ցուց, և միշտ իր պակսութիւնը պատ-
մելով, կ'ուգէր գերագոյն առաքինու-
թեամբ մը՝ ծածկել կայսեր անիրաւու-
թիւնը և անզթութիւնը . առաքինու-
թիւն այնքան հիանալի՝ որքան այն .
պիսի ապականեալ ժամանակի և ար-
քունեաց մօտ փայլեցաւ . գննաւորու-
թեան հոգին աւելի խոր և պինդ հա-
գեր էր ներսէն, քան դրսուանց մաշ-
կեղէն մը ամառը, մազեղէն մը ձմե-
ռը, որ էին իր բոլոր հագուստը . իսկ
զլուին և սուզն միշտ բաց և բոպիկ :
Ասոր նման կերակրիկն ալ, եթէ կրնար
ըսուիլ կերակուր . ոչ միայն բերանը
չդրաւ մսեղէն և կիթեղէն, այլ և ոչ ձէթ
և գինի . այլ միայն գարիէ հաց . այն այլ
ինքն իր ճեռոք կու պատրաստէր և կ'ե-
փէր միխրի տակ . լրսաղուրկ աչքերն
չթողլով իրեն երկար ձեռագործ աշ-
խատանք՝ մտաւոր աշխատութիւնն ա-

ւելցուց, աղօթք և խոկմունք . որոցմով
զմնյած՝ ոչ թագին, ոչ աշխարհիս և ոչ
իսկ ամեն սրտի մխիթարիչ արևուն կո-
րուսար կիմանար. Միայն մէկ հոդ, մէկ
ցաւ, մէկ փափագ մ'ունէր դեռ սրտին
դրգիո. ընտանիքն. վասն զի ունէր և դեռ
ողջ էին կինն և զաւակներն . Անոնց ցան-
կալի երեսաց տեսութենէն զըկուին չէր
իր մեծ ցաւն . վասն զի գոնէ ձայներնին
կրնար լսել և խօսիլ . այլ ինքն իր հոգւոյն
խորին ձայնը կ'ուզէլ լսեցնել անոնց
հոգւոյն, և կրցաւ . Ուրիշներէ աւելի ինք-
զինքն օրինակ ցուցընելով աշխարհիս
ընդունայնութեան, և հանդերձելոց ան-
փոփոխ վիճակին, այս կենաց ցաւե-
րուն կարճութեանը, և այն կենաց ան-
վախճան երանութեանը, զամենքն ալ
հաւանեցոց իրեն նմանելու . նախ տի-
կինն Դումնիկ (կամ Տոմինիգա) յան-
ձըն առաւ քաշուելու 'ի վանս հաւա-
տաւորաց, և ինքնին վարդան փոխեց
ամուսնոյն անսունը գրաւ Արանասիա .
իր մէկ զստրիկն ալ հետը մոտոց 'ի
հարսնարանն Քրիստոսի . յետոյ իր կըտ-
րիմ որդիքներն այլ հաւանեցոց, որը
յօժարութեամբ սուրբերնին այլ, ամեն
ունեցածնին այլ ծախեցին բաժնեցին
աղքատաց, և առանձնացան վանքերու
մէջ միայն հոգինին հոգալու :

Այսպէս երկրիս վրայ ապահովելով
անոնց երկնաւոր վիճակը՝ որոնց որ
պարտական էր հոգալու իրբն հայր և
տանուտէր, անկէ ետև այլ աւելի ա-
զատութեամբ և հանդարտութեամբ իր
հոգին կուժալցնէր և կու հասցընէր
յաւիտենական նպատակին : Շատերն
տեսան և կու զարմանային Սաբայի
սրբութեանը վրայ . և ով կրնար կար-
ծել թէ անհիայ էր Արևելքի քաջ սպա-
րապետն թուրք վարդան : Համբերա-
տար հանգստութիւնն և չարքաշ վարքն
յաղթեցին իր ճգնութեանց խսուու-
թեանը, և երկարեցին կեանքը . մինչև
լսեց ութ ասրիէն ետև իր անիրաւ նա-
խանձոտին՝ Նիկեփորի՝ խերծ՝ և չարա-
շար մահը, զոր գրեթէ ինքն պատճա-
ռեց իրեն և իր բոլոր բանակին, անխո-
հեմութեամբ յառաջ երթալով բուլղա-

րաց երկիրը, և ստէպ ստէպ ըսելով, թէ
«Զեմ գիտեր՝ Աստուած թէ սատանան
է զիս առաջ քշողը, բայց չեմ կրնար
ետ կենալ ». մինչև հասան ձորադաշտի
մը, որոյ երկու կողմը դոցեցին Բուլ-
ղարք՝ անտառներ ջարդելով և ծառէ
պարիսպ քաշելով . ապա կրակ տալով
անոնց, իրենք ալ զինուած յարձակե-
լով՝ կայսրն ալ, մեծամեծներն ալ, բո-
լոր զօրքն ալ մէկ աւուր մէջ (25 յու-
լիսի 811) սրամահ և ծխամահ ննջե-
ցին : Նիկեփորի գանկն Բուլղարաց թա-
գաւորին զինուոյ բաժակ եղաւ . բոլոր
Բիւղանդիոն և կայսերութիւնն սպալով
իրենց զօրաց և զաւակաց կորստեան
վրայ՝ միայն Նիկեփորի կորուստն իրենց
այրած սրտին մխիթարանք կուգտնէին.
այնքան ատելի եղած էր անկուշտ ագա-
հութեամբ և անհոգութեամբը : Երկու
տարի ետև (յորում տիրեցին Ստաւրակ՝
որդի Նիկեփորի, և Միքայէլ կիւրոպա-
լատ) լսեց Վարդան իր առաջին զինա-
կրին և նախյիշեալ Լևոնի Արծունուոյ
կայսր ըլլալը (813–820), ինչպէս լսեր
էր հինգ տարի առաջ (808) ուրիշ հայ
ազգւոյ և Լևոնի աներոջ՝ Արշարիք փորձ
փորձելն ընդդէմ Նիկեփորի, և իրեն
պէս չյաջողելով՝ բանուիլու ու պատրուիլն
ոչ հեռաւոր վանքի մը մէջ ('ի Բիւղե-
նիա) : Այս դէպքերս իրեն սրտին մէկ-
մէկ հարուածք եղած՝ իր ըրածը յի-
շելով և իրբն ընկերացը չար օրինակ
մը տուած համարելով զինքը . անոր
համար նախակինամութեան կամաց և
կարգաց թողով եղածը՝ ինքն իր ճըգ-
նութիւնները և հոգեւոր եռանդն աւել-
ցուց յառանձնութե իր ծովակոծ՝ բայց
անվտանգ կղզեկին մէջ . որուն շրջա-
պատ ալեաց ծփանքն և անուշ հովերն
բաւական էին իրեն՝ մերձաւոր մեծ
մայրաքաղաքին և բոլոր աշխարհիս
խառնաձայն կոծմունք և ծփմունքը ցած-
ցընելու . մինչև որ ճշմարիտ և յաւիտե-
նական թագաւորութեան հրաւերքն
յափշտակեց զինքը յերկինք . ուր ընդ
յիշաւակելի սուրբա ճանշան զնա
Յայնք . մինչգետ իր յատուկ ազգայնոց՝
չայսց պատմէաց մէջ՝ և ոչ ճանցուած

է այս իրենց ամենէն երևելի զօրավար-ներէն, միանգամայն և սաբայացեալ ճգնաւորներէն մէկն, որ յիսուն օր այլ կրնար կոչուկէ Բ Վարդան կայար *:

ՄԵԾԻՆ ՆԱԲՈԼԵՈՒՆԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Վիրդիլիոսի Էնիականին Բ գրոցը
վրայ .

1857 Բաղմավիպին հոկտեմբերի ամսաթերթին մէջ (երես 299) դրած ենք Պէտք անդղիացւոյն դատաստանը վիրդիլիոսի էնիական դիւցազներգութեանը վրայ : Լատին բանաստեղծին քերթուածը ան տեսակ զրուածքներէն է՝ որոնց համբաւը իրենց հրատարակուելուն օրէն կը սկսի, և երկայն դարերու միջոց, մինչեռ պետութիւնք կը կործանին, քաղաքք կ'աներեւութանան և աղքք յափտենական մոռացութեան տակ կը թաղուին՝ կը մնայ ողջ և անարատ, շարժելով ամեն ժամանակի մարդիկը ՚ի զարմացումն և ՚ի գովեստ : Շատերը զննած են այս դիւցազներգութիւնը քննաբանութեան ճրադին լուսովը, և զուտ և փայլուն ուսկիէն զատ՝ գտած են նաև տեղ տեղ այլ և այլ թերութիւններ, տկարութիւն ծրբագրի և մասանց դասաւորութեան . բայց զարմանք չէ, որովհետև հեղինակը ատեն չէ ունեցած վերջին ձեռքը

* Յետ Վարդանայ՝ իր առանձնութեան կղզին և գաստակերա բրոդի՝ ուրիշ գահէ ընկած կամ մերժուած կայսերաց ալ արդեւան և ընակարան եղաւ . որոց մէջ անուանի է իրեն և մեր աղքակիցն Ռուման Ա Լուսապէն . որ յետ 28 տարի զանազան գործովն կայսերութեան՝ հոս քշուած և քաշուած՝ շատ գոհութեամբ և զգաստութեք, դուցէ և իր հին նախորդ Վարդանը յիշելով ու անոր առաքինութեանն նմանիլ ջանալով՝ վանձանեցաւ (944): — Բ Ռումանուն (Դիտժեն) կայսոն ալ Ալփարսանէն գեթաղդաբար յաղթուելէն տեղի գեթաղդաբար՝ իր աղքակցոց ապերատ տուժենէն մերժուած և կուրացած՝ հոս աքսորանքի մէջ քէ օրէն կնքեց իր դառնացեալ կեանքը, (1077):

տալրւ. և գիտենք որ ուզած ալ է կրակի դատապարտել զայն :

Էնիականին վրայ (աւելի գէշ քան թէ աղէկ) խօսողներէն մէկն է Ա. Հեղինէի տիեզերահուշակ գերին, որ սուր և բոլորովին նոր դիտողութիւններ ըրած է Բ գրոցը վրայ, յորում էնիաս դիւցազնն կը պատմէ Դիդէի՛ Տրոյից աղիտալի առումը և կործանուիլլը : Աս ալ կը փութանք զուրցելու որ Նաբուլէնին իրեւ հմուտ պատերազմական արուեստի՝ այնպէս կը խօսի տիրաբար յարուոյ, թերեւս երբեմն մոռնալով վիրդիլիոսի արժէքը :

« Էնիականին Բ գիրքը կը համարուի իրեւ դուխս գործոց այս դիւցազներգութեան . ոմի կողմանէ մտածելով արժանի է այս պատույն, բայց ոչ գործողութեանց հիմանը նայելով :

« Փայտէ ձին կրնար ռամկական աւանդութիւն մը ըլլալ . բայց այս աւանդութիւնս ծաղրական է և բոլոր վին անարժան դիւցազներգութեան մը : Այդպիսի բան չտեսնուիր բնաւ իլիականին մէջ, ուր ամենայն ինչ յարմար է ճշմարտութեան և հրահանգաց պատերազմի : Ի՞նչպէս ան աստիճանի պուշ սեպենք զգրովացիս՝ որ ձկնորսի նաւակ մը ղրկած չըլլան Տենեսդոս կըղզին, տեսնալու համար թէ Յունաց հազար նաւերը արդեզր հոն կեցեր չէ նէս ստուգիւ գացեր էին : Բայց իլիոնի աշտարակաց վրայէն կը տեսնուէր Տեներու նաւակայքը : Ի՞նչպէս կարելի է կարծել զնդիսես և Յունաց այլընտիր զօրավարները այնչափ անմիտ՝ որ կը փակուին փայտէ ձիու մը մէջ, որ ուրիշ բան ըսել չէ, բայց եթէ ուազով ձեռքով կապուած անձնատուր ըլլալ իրենց անողոքելի թշնամիներուն . Նոյն իսկ ենթադրելով որ այս ձիուն մէջ միայն հարիւր պատերազմողք ըլլային, պէտք էր որ ձին սոսկալի ծանրութիւն մը ունենար ¹, և հաւանական չէ որ կա-

1 Ննթադրելով երեսուն տարուան հարիւր մարդիկ՝ հասակնին 1 մետր 684, իւրաքանչէրքին ծանրութիւնը պիտի ըլլար . ըստ հաշուոյ Քըդէւ